Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին /2013թ. ընթացքում/

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովն անց է կացրել 5 նիստ: Քննարկվել են բազմաբնույթ հարցեր, նիստերին հրավիրվել և մասնակցել են հաշմանդամների հիմնախնդիրներով զբաղվող մարզում գործող բազմաթիվ ՀԿ-ների, պետական ու ոչ պետական կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանների աշխատակիցներ:Նիստերի արձանագրությունները սահմանված կարգով ՀՀ Տավուշի մարզպետի 07.10.2013թ. թիվ 01/14.1/3992-13 և 04.11.2013թ. թիվ 01/14.1/4312-13 գրություններով ներկայացվել են ՀՀ աշխ. և սոց. հարցերի նախարարություն, որոնց մեջ նշված են նիստերի մասնակիցները, հրավիրված անձինք և օրակարգային հարցերը: Նիստերի ընթացքում քննարկվել են բազմաթիվ հարցեր: Այդ թվում. *Հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնման պարագաների տրամադրման գործընթացի մասին իրազեկում /ՀՀ կառավարության 15.07.2010թ. թիվ 88-Ն որոշում/, ,,Առողջական վիճակի վերականգնման հեռանկարի բացակայության դեպքում առանց եռամսյա դիտարկման ժամկետի պահպանման բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրվող անձանց հիվանդությունների ցանկը հաստատելու մասին''/, ԲՍՓՀ գործունեության բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին, ,,ՀՀ կառավարության 13.09.2013թ. թիվ 36 արձանագրային որոշման ,,Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թվականների ծրագրին հավանություն տալու մասին'' քննարկում և ներկայացում,, և այլն: Հանձնաժողովի քննարկումների արդյունքներում մի շարք առաջարկություններ են ներկայացվել ՀՀ ԱՍՀՆ և տարածքային կառավարման նախարարություն:

Հանձնաժողովի նիստերին մասնակցել են համայնքների ճարտարապետներ, որոնց հետ քննարկվել է ՀՀ կառավարության 2006թ. Թիվ 392-Ն որոշման պահանջների կատարման ընթացքը: Հղում է արվել բոլոր համայնքապետերին՝ տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքները հաշմանդամներին հարմարեցնելու և որոշման պահանջների կատարման ընթացքն ապահովելու վերաբերյալ:

Մասնակցել են մարզում գործող հաշմանդամների հիմնախնդիրներով զբաղվող բազմաթիվ ՀԿ-ներ, համայնքապետարանների ներկայացուցիչներ, համայնքային կենտրոնների ֆասիլիտատորներ և այլն:

Հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվել է ,,Տավուշ'' մարզային թերթում և ,,Տավուշի մարզպետարան'' ինտերնետային կայքում: